№ 64 Ապրիլի 16 (28)

1882

ՏԱՍՆՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Ապրիլի 16 (28) № 64

ՄՇԱԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կէս տարվանը 6 ռուբլի։
Առանձին համարները 5 կոպեկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի
Тифлисъ. Редакція «Мшака»

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Ցայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կոպեկ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ ՆԵՐՔԻՆ լուրեր։—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ։ «Голосъ» լրագրի թղթակցութիւնը։ Աւստրօ-Ունգարիա։ Սերբիա։ Արտաքին լուրեր։—ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ։—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։—ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ։—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ։ Նամակ Ս. Պետերբուրգից։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Այս օրերս Կովկասեան քաղաքական մասի կառավարչապետ, իշխան Դոնդուկով-Կորսակով, թողնելով Թիֆլիս, ուղևորվեց դէպի Բաքու։ Այնտեղից իշխանը պէտք է անցնի Կրասնովոդսկ և շրջի Անդրկասպեան երկիրը։ «Кавказъ» լրագիրը հաղորդում է որ մայիս ամսին իշխանը կրկին կը վերադառնայ Թիֆլիս։

—

Ապրիլի 13-ին հայ թատրոնասէրները ներկայացրին Արծրունու թատրոնում Գ. Սունդուկեանցի «Քանդած Օջախ» պիէսան։ Ոչ մի անգամ Սունդուկեանցի այդ գեղեցիկ պիէսան, որ մինք միշտ համարել ենք մեր հեղինակի բոլոր պիէսներից ամենաաջողվածը, մեզ վրա այնպիսի խոր ազաւորութիւն չը գործեց, ինչպէս այդ ներկայացմանը։ Ներկայացման աջողութիւնը մինք վերաբերում ենք մասամբ նրան, որ պիէսան փոքր ինչ կրճատված էր և նրանից մի քանի աւելորդաբանութիւնները դուրս էին գցված, բայց գլխաւորապէս այն հանգամանքին որ «Քանդած Օջախը» այս անգամ շատ գեղեցիկ կերպով խաղացվեցաւ։ Բոլոր խաղացողներն էլ լաւ էին իրանց դերերում, բայց մանաւանդ պ. պ. Բեգլարեան և Խալաթեան, տ. տ. Խոսրովեան և Եւանգուլեան և օր. Յովհաննիսեան։ Բեգլարեան, որ խաղում էր Օսէփի դերը ճշմարիտ զգացմունք էր շարժում հասարակութեան մէջ։ Շատ հաճելի է պատահել մեզ մեր բեմի վրա տեսնել այդ աստիճան խելացի, մտածված խաղ, վայելուչ, տպաւորութիւն գործող և նպատակայարմար շարժումներով։ Այն տեղերում, որտեղ Օսէփի դերի առաջվայ կատարողները անգիտակցաբար և ակամայ ծիծաղեցնում էին ամբոխին, պ. Բեգլարեան չատերին լացացրեց։ Աւելորդ ենք համարում ասել որ տիկին Եւանգուլեան, ինչպէս մի քանի տարի սրանից առաջ, այնպէս և այժմ, անման էր Խախօի դերում։

—

Ապրիլի 13-ին մի անասելի յանդուգն սպանութիւն պատահեց Թիֆլիսում։ Գնդապետ Անմէդ Աղա-Բակիխանովի բնակարանի դրանը Կուկիայում, ժամը 9-ին երեկոյեան, անյայտ մարդիկ զանգակ տալով, մտան բնակարանը և անմիջապէս սպանեցին իրան գնդապետին և նորա ծառային։ Սպանութիւն գործելուց և բնակարանում եղած թանգագին իրեղէնները կողոպտելուց յետոյ, չարագործներն անյայտացան։

—

«Русскій Курьеръ» լրագիրը նախ հաղորդեց որ կոմս Լորիս-Մելիքովի Ս. Պետերբուրգ գալու լուրը սխալ է, քանի որ կոմսը տկար է և այդ պատճառով արտասահման թողնել չէ կարող, իսկ իր վերջին համարում նոյն լրագիրը հաղորդում է որ կոմսը գալու է Ս. Պետերբուրգ ապրիլի 28-ին։

—

Չորեքշաբթի օր, ապրիլի 14-ին, Ռուսաստանի փոստը չը ստացվեցաւ Թիֆլիսում, սարերի վրա ընկած ռաստիկ ձիւնակոյտերի պատճառով։

—

Պ. Արսէն Թօխմախեան խնդրում է մեզ յայտնել որ իր դասախօսութիւնը միայն յետաձգված է և նա խոստանում է վաղօրոք յայտնել որ օրը նորից կը նշանակի իր ատենաբանութեան համար։

—

Սարերի վրա հալվող ձիւների և մի քանի օր շարունակ եկած անձրևների պատճառով Կուրգետը ռաստիկ բարձրացել է։ Երեք օր սրանից առաջ կառաղի գետը շուռ տալով մի նաւակ, որի մէջ նստած էին հինգ հոգի հասարակ ժողովրդի որի մէջ նստած էին հինգ հոգի հասարակ ժողովրդի մարդկանցից, ջրի մէջ ընկածներից երեքը կարողացան լող տալով կրկին հասնել ափը, իսկ մնացած երկուսը զոհ դարձան կառաղի ալիքների։

—

Լսում ենք որ մի քանի օր սրանից առաջ երեք հոգի յանցաւորներ փախան Թիֆլիսի բանտից։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 4-ին, կիրակի երեկոյեան, հաշտարար դատարանի դահլիճում տեղի ունեցաւ հայոց սիրողների մի ներկայացում, բարեգործական նպատակով։ Հասարակութիւնը, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, իր շնորհակալութիւնն է յայտնում հաշտարար դատաւոր պ. Պավլովին, որ չը մերժեց տալ դահլիճը ներկայացման համար, համակրելով ամեն բարեգործական նպատակներին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Անցեալ մարտ ամսին վեհափառի հրամանով ընտրվեցան հոգաբարձուներ մեր Գայեանեան ուսումնարանի համար։ Դա առաջին անգամն է. մինչև այժմ հոգաբարձուներ ընտրելը արգելված էր, այլ ընտրում էին միայն հոգաբարձուհիներ։ Իսկ հիմա հոգաբարձուք երկու սեռից էլ կը լինեն. գոնէ այժմ ժողովուրդը տեղիք չի ունենայ տրտնջալու։»

—

Նոյն տեղից մեզ գրում են։ «Մեր գիմնազիայում հայոց լեզուի դասաւանութիւնը շատ վատ դրութեան մէջ է։ Ամբողջ երկու ամիս հայոց լեզուի դասեր չը կային, որովհետև ուսուցիչ չը կար, իսկ այժմ այդ լեզուի դասաւանութիւնը յանձնված է մի տէրտէրի, որ ամենևին հայերէն չը գիտէ։ Իր տգիտութիւնը ծածկելու համար տէր հայրը յայտնել է որ հայերէն լեզուն պէտք է անցնի Զամչեանի քերականութեամբ և պահանջում է աշակերտներից որ իրանց հետ բերեն այդ գիրքը, իսկ Պալասանի քերականութիւնը անպէտք է յայտնել։»

—

Մեզ խնդրում են ապել հետևեալ յայտարարութիւնը։ «Հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը պատիւ ունի սորանով հրաւիրել ընկերութեան յարգոյ անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովին, Արծրունու թատրոնում, ամսոյս 18-ին, կիրակի, 12 ժամին, վերատուգող մասնաժողովի անդամների ընտրութիւնը կատարելու համար։»

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ

—

Նաիրում իր վերջին արշաւանքը Թագաւորը անում է 866 թվին, երբ նա հասնում է Կասիարու այն տեղերը, ուր չեն եղել հասած իր նախնիքներից ոչ մի թագաւոր։ Յետոյ անցնելով Տիգրիսի աջակողմեան ափը՝ հիւսիսային Միջագետքը՝ նա հասնում է մինչ Եփրատի ափերը։ Կիրկում եղած խուռվութիւնները հարկադրում են նրան նորէն անցնել Տիգրիսի ձախակողմեան ափը։ Այստեղ կրկին սանձում է բնակիչներին և, շարժվելով դէպի արևմուտ, առնում է Դամասուչու քաղաքը, որի բնակիչներին գաղթեցնում է Ամիդա, իսկ դերի զօրքերին ի խաչ հանում գլխաւոր դրանց առաջև։ Այսպէս Ասուր-Նասիր-Բալի երկրակալութիւնները սահմանափակվում են Մուրադ-չայի գծով (Arzanias), Վանայ լճի հիւսիսային ծովափով և Զագրոս սարով։ Սրա յաջորդներին մնում է անցնել Արզանիաս գետը ու արշաւել Ուրարտու աշխարհում։ Արզանիասից և Վանայ լճից դէպի հիւսիս ծաւալած երկիրը բաժանված էր մի քանի խոշոր և բազում մանր իշխանութիւնների վրա, որոնք ստորադրված էին—ռազմական նկատմամբ—Ուրարտու Թագաւորների իշխանութեան ներքոյ։ Այս Թագաւորների գերիշխանութիւնը ընդունում էր ամբողջ հիւսիսային Հայաստանը։

Սալմանասար (857—856), Ասուր-Նասիր-Բալի յաջորդը, իր առաջին արշաւանքը անում է Նէնին, Սիմիսի, Արիդի և այլ գաւառներում, այսինքն Բոլորտ (sic) և խաղում է դէպի արևելք Խուրուշկայ գաւառը։ Սրա պայազատները, Կակիայ, հեռանում է դէպի լեռները ու այստեղ սպասում թշնամուն։ Արիւնահեղ ճակատամարտից—ըստ սովորութեան—Ասորեստանցին յաղթող է դուրս գալիս։ Տուրքեր ժողովելուց և նոր հարկեր նրանց դնելուց յետոյ, Թագաւորը մերձենում է Ուրարտուց Թագաւորի, Արամի, Զուգունեայ քաղաքին։ Այս Արամի (857, 842) ժամանակ առաջին անգամն է որ ասորեստանցիները բախվում են ուրարտուց հետ։ Ամնելով Զուգունեա և սրան նման էր Խախօի դերում։

—

Ապրիլի 13-ին մի անասելի յանդուգն սպանութիւն պատահեց Թիֆլիսում։ Գնդապետ Անմէդ Աղա-Բակիխանովի բնակարանի դրանը Կուկիայում, ժամը 9-ին երեկոյեան, անյայտ մարդիկ զանգակ տալով, մտան բնակարանը և անմիջապէս սպանեցին իրան գնդապետին և նորա ծառային։ Սպանութիւն գործելուց և բնակարանում եղած թանգագին իրեղէնները կողոպտելուց յետոյ, չարագործներն անյայտացան։

—

«Русскій Курьеръ» լրագիրը նախ հաղորդեց որ կոմս Լորիս-Մելիքովի Ս. Պետերբուրգ գալու լուրը սխալ է, քանի որ կոմսը տկար է և այդ պատճառով արտասահման թողնել չէ կարող, իսկ իր վերջին համարում նոյն լրագիրը հաղորդում է որ կոմսը գալու է Ս. Պետերբուրգ ապրիլի 28-ին։

—

Չորեքշաբթի օր, ապրիլի 14-ին, Ռուսաստանի փոստը չը ստացվեցաւ Թիֆլիսում, սարերի վրա ընկած ռաստիկ ձիւնակոյտերի պատճառով։

—

Պ. Արսէն Թօխմախեան խնդրում է մեզ յայտնել որ իր դասախօսութիւնը միայն յետաձգված է և նա խոստանում է վաղօրոք յայտնել որ օրը նորից կը նշանակի իր ատենաբանութեան համար։

—

Սարերի վրա հալվող ձիւների և մի քանի օր շարունակ եկած անձրևների պատճառով Կուրգետը ռաստիկ բարձրացել է։ Երեք օր սրանից առաջ կառաղի գետը շուռ տալով մի նաւակ, որի մէջ նստած էին հինգ հոգի հասարակ ժողովրդի մարդկանցից, ջրի մէջ ընկածներից երեքը կարողացան լող տալով կրկին հասնել ափը, իսկ մնացած երկուսը զոհ դարձան կառաղի ալիքների։

—

Լսում ենք որ մի քանի օր սրանից առաջ երեք հոգի յանցաւորներ փախան Թիֆլիսի բանտից։

—

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ մեզ գրում են, որ ապրիլի 4-ին, կիրակի երեկոյեան, հաշտարար դատարանի դահլիճում տեղի ունեցաւ հայոց սիրողների մի ներկայացում, բարեգործական նպատակով։ Հասարակութիւնը, ինչպէս հաղորդում է մեր թղթակիցը, իր շնորհակալութիւնն է յայտնում հաշտարար դատաւոր պ. Պավլովին, որ չը մերժեց տալ դահլիճը ներկայացման համար, համակրելով ամեն բարեգործական նպատակներին։

—

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են։ «Անցեալ մարտ ամսին վեհափառի հրամանով ընտրվեցան հոգաբարձուներ մեր Գայեանեան ուսումնարանի համար։ Դա առաջին անգամն է. մինչև այժմ հոգաբարձուներ ընտրելը արգելված էր, այլ ընտրում էին միայն հոգաբարձուհիներ։ Իսկ հիմա հոգաբարձուք երկու սեռից էլ կը լինեն. գոնէ այժմ ժողովուրդը տեղիք չի ունենայ տրտնջալու։»

—

Նոյն տեղից մեզ գրում են։ «Մեր գիմնազիայում հայոց լեզուի դասաւանութիւնը շատ վատ դրութեան մէջ է։ Ամբողջ երկու ամիս հայոց լեզուի դասեր չը կային, որովհետև ուսուցիչ չը կար, իսկ այժմ այդ լեզուի դասաւանութիւնը յանձնված է մի տէրտէրի, որ ամենևին հայերէն չը գիտէ։ Իր տգիտութիւնը ծածկելու համար տէր հայրը յայտնել է որ հայերէն լեզուն պէտք է անցնի Զամչեանի քերականութեամբ և պահանջում է աշակերտներից որ իրանց հետ բերեն այդ գիրքը, իսկ Պալասանի քերականութիւնը անպէտք է յայտնել։»

—

Մեզ խնդրում են ապել հետևեալ յայտարարութիւնը։ «Հայոց բարեգործական ընկերութեան խորհուրդը պատիւ ունի սորանով հրաւիրել ընկերութեան յարգոյ անդամներին շնորհ բերել ընդհանուր ժողովին, Արծրունու թատրոնում, ամսոյս 18-ին, կիրակի, 12 ժամին, վերատուգող մասնաժողովի անդամների ընտրութիւնը կատարելու համար։»

Ուրարտու աշխարհում, այնու ամենայնիւ մի քանի կշռադատութիւններ թոյլ են տալի մեր հեղինակին կասկածել նրանց ճշտութիւնը։—Նախ որ, ասում է նա,—այս յաղթանակակիր արշաւանքների վրա խօսելուց յետոյ, արձանագրերը լռում են առած աւարների նկատմամբ, մինչդեռ նրանք՝ սովորաբար՝ ոչ մի անգամ զանց չեն արել այս կէտը։ Երկրորդ՝ ասորեստանցիք հէնց որ ծանօթանում էին մի երկրի հետ, էլ դադար ու հանգստութիւն չէին տալի այն երկրին իրանց յարձակումներով մինչև որ նուաղեցուցեալ և ընկճեալ երկիրը չէին համարում յաղթված։ Այս պատճառաւ սպասելի էր, որ Սալմանասարից յետոյ նրա յաջորդները պիտի ամեն տարի արշաւէին Ուրարտու, բայց սրանց արձանագրերում երկար ժամանակ մինք չենք պատահում այս արշաւանքներին։ Այս մի քանի պարագաները իրաւունք են տալի մեզ եզրակացնել թէ՝ Սալմանասարի յաղթանակները այնքան էլ վճռողական չեն եղել, ինչպէս ինքն է խօսում, և թէ՝ Ուրարտացիք բաւականի ուժգին ընդդիմութիւն են ցոյց տալի ասորեստանցիներին...

Սամսի-բին, Սալմանասարի որդին (882), իր նախորդների չաւղով դարձնում է իր կործանիչ արշաւանքները բազմաչարչար Նաիրի դէմ... Ինչպէս սրա, նոյնպէս իր որդու յաջորդի, Բին-Նիրարի (809—790) արձանագրերում ոչ մի անգամ չէ յիշվում որ նրանք արշաւած լինէին Ուրարտու աշխարհում... Բաւականանալով սրանց Թագաւորութեան վերաբերմամբ միայն այս երկու խօսքով, բաց ենք թողնում նրանց արձանագրերի մանրամասնութիւնները։ Բայց Բին-Նիրարի նկատմամբ աւելցնենք այն հանգամանքը, որ մի փոքրիկ արձանագրում՝ որ վերաբերում է նրա թագաւորութեանը, գտնում ենք նրա կնոջ՝ «Սամուրամատ Ասորեստանի թագուհու» անունը։ Գիտնականներից մի քանիսը կարծում են թէ այս թագուհին այն պատմական անձնաւորութիւնը պիտի լինի, որի շուրջը պատում են աւանդութիւնները, ստեղծելով դիցաբանական Շամիրամին, որը, ինչպէս յայտնի է, մեծ դեր ունի մեր ժողովրդային աւանդութիւններում։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

„ГОЛОСЪ“ ԼՐԱԳՐԻ ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Բերլինից „Голосъ“ լրագրին գրում են հետևեալը: Եւրոպայում սկսված պարլամենտական արձակուրդների ժամանակ Ս. Պետերբուրգից այստեղ ստացվեցաւ մի նշանաւոր լուր, որ իշխան Գորչակով թողեց արտաքին գործերի մինիստրի պաշտօնը: Մեր լրագիրները ուրախութեամբ ընդունեցին այդ հարուստ նիւթը և միաձայն կարծիք յայտնեցին մինիստրական այդ փոփոխութեան մասին: Իշխան Գորչակովի գործունէութեան մասին տպվեցան մանրամասն յօդուածներ, որոնք նկարագրում էին պետական այդ մարդու քաղաքականութեան նշանակութիւնը Ռուսաստանի համար: Թէպէտ իշխան Գորչակով վերջին տարիների ընթացքում շատ բարեկամաբար չէր վերաբերվում Գերմանիային, այնու ամենայնիւ գերմանական լրագիրները շնորհակալութեամբ յիշում են այն փաստը, որ Գերմանիայի համար դժուար ժամանակներում, 1866 և 1870 թուականներին, իշխան Գորչակով Ալէքսանդր II կայսրի ամենամօտ խորհրդատուներից մէկն էր և շատ նպաստեց, որ Ռուսաստանը այն ժամանակներում բարեկամաբար վերաբերվեցաւ Գերմանիային: Այստեղ մեծ նշանակութիւն են տալիս այն հանգամանքին, որ իշխան Գորչակովին փոխարինեց Գիրս և թէ համայն սլավեանների ազդեցութիւնը չը խանգարեց այդ նշանակութեանը, որ շատ լաւ տպաւորութիւն գործեց թէ Բերլինի և թէ Վիէննայի մէջ: Գիրսի մասին այստեղ ամենքը այն կարծիքի են, որ նա խաղաղութեան կողմնակից է և ցանկանում է բարեկամական յարաբերութիւններ պահպանել դրացի պետութիւնների հետ: Այդ է պատճառը, որ նրան արտաքին գործերի մինիստրի պաշտօն յանձնելը այստեղ համարում են մի ցոյց Ռուսաստանի կողմից յօդուտ եւրոպական խաղաղութեան և նախկին բարեկամական յարաբերութիւնների պահպանութեան: „Journal de St.-Pétersbourg“ լրագրի յայտնած մտքերը նոր մինիստրի ապագայ քաղաքականութեան մասին շատ լաւ տպաւորութիւն գործեցին թէ մամուլի և թէ քաղաքական շրջանների վրա:

Այստեղ լուրեր են տարածվել, որ յայտնի ճանապարհորդը Աֆրիկայում գտնվող Նահտիգալ գերմանական գլխաւոր հիւպատոս է նշանակված Ցունիսի մէջ: Գերմանական կառավարութեան այդ կարգադրութեանը մեծ նշանակութիւն են տալիս: Հաւատացնում են, որ իշխան Բիսմարկ այդ հմուտ անձին Ցունիսի հիւպատոս նշանակեց այն նպատակով, որ, եթէ Ռուսաստանի հետ Գերմանիան ստիպված լինի պատերազմել, Ֆրանսիայի ուշադրութիւնը Արևելքի և գլխաւորապէս Աֆրիկայի գործերի վրա լինի դարձրած: Այդ գործի համար Նահտիգալ շատ պիտանի է, որովհետև նա յարաբերութիւններ է կապել մահմեդական թափառական ցեղերի հետ, որոնք իրանց կողմից ենթարկված են Տրիպոլիսի մէջ եղած թիւրքաց աստիճանաւորների ազդեցութեանը: Նահտիգալին պաշտօն յանձնելու այդպիսի մեկնութեանը անկարելի է կատարեալ հաւատ ընծայել, թէպէտ չէ կարելի մերժել և այն փաստը, որ կառավարութեան ընտրութիւնը շատ գեղեցիկ է, քանի որ Նահտիգալ ամենից լաւ ծանօթ է աֆրիկական գործերի հետ:

Բացի այդ, այստեղ լուր տարածվեցաւ, իբր թէ Շվեդիայի և Գերմանիայի մէջ դաշնակցութիւն է կապված: Այդ լուրը տարածվեցաւ „Times“ լրագրի մէջ տպված մի թղթակցութեան շնորհիւ Փարիզից, որ յետոյ արտատպվեցաւ Ստոկհոլմի «Dagbladet» լրագրի մէջ: Բերլինի քաղաքական շրջանները ուշադրութիւն չը դարձրին այդ լուրի վրա, իսկ լրագիրները միայն հարեւանցի նրան յիշեցին: Ակներև է, որ այդ բոլորը առասպելներ են: Բացի Պորտուգալիայից Եւրոպայի մէջ անկարելի է գտնել մի այլ երկիր, որ այնքան հեռու լիներ բարձր քաղաքականութենից, որքան Շվեդիան և Նորվեգիան: Բացի այդ ոչ մի երկիր այնքան անուշադիր չէ թողել իր ծովային և ցամաքային ոյժերը, որքան Շվեդիան և Նորվեգիան, հետևապէս այդ պետութեան հետ դաշնակցութեան կապելը ոչինչ օգուտ չէ ներկայացնում: Պէտք է աւելացնել և այն իրողութիւնը, որ այդ երկրի ազգաբնակութիւնը չափազանց թշնամութեամբ է վերաբերվում վտանգաւոր քաղաքականութեանը: Աչքի առաջ առնելով այս հանգամանքները, կարելի է հաստատ ասել, որ ոչ Բերլինի և ոչ Ստոկհոլմի մէջ դաշնակցութեան մասին խօսք էլ չէ եղած:

Ծխախոտի մենավաճառութեան հակառակորդների թիւը հետզհետէ շատանում է: Մինչև անգամ կառավարութեան կուսակիցներն էլ ընդդէմ են այդ օրինագծին և առաջարկում են մենավաճառութենից ստացվելի եկամուտը այլ հարկերով փոխարինել: Առհասարակ Գերմանիայի ներքին քաղաքականութիւնը ներկայումս շատ անմխիթար է և ապագայի համար էլ լաւ բան չէ խոստանում:

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

Ապրիլի 15-ին աւստրիական պատգամաւորների ժողովի պարապմունքները սկվեցան նախագահ Ֆօն-Շմերլինգի ճառով, որ աւետեց իր յայտնած յոյսի կատարվելը ապստամբված նահանգները խաղաղացնելու մասին: „Մեզ հանգստացնում է, ասաց նա, այն իրողութիւնը, որ ապստամբութիւնը ընդհանրապէս վերջացած է: Դրանով մենք պարտական ենք հրամանատարների խելացի առաջնորդութեանը և մեր զօրքերի քաջութեանը, որոնք այս անգամ էլ փառաւոր կերպով ցոյց տուին իրանց պատերազմական արժանաւորութիւնները: Կայսերութեան բոլոր բաժիններից կազմված զօրքերի մէջ ամենաանբիւ ընկերութիւն էր նշմարվում: Պատերազմներին մասնակցում էր և մի դալմատական դունդ, որի քաջ զինուորները ապացուցին, որ նրանք չեն ճանաչում իրանց եղբայրներին, երբ հարկաւոր է լինում ընդդիմադրել պետութեան թշնամիներին: Երկիրը խաղաղացնելուց յետոյ կառավարութիւնը պէտք է հոգայ, որ այդպիսի անցքերի կրկնվելուց մենք ազատ լինենք: Այդ երկիրների մէջ պէտք է ուշադրութեամբ գործել և մասամբ խստութեամբ, այդ պատճառով հպիւ թէ կարելի լինի մտցնել այնտեղ սահմանադրական հիմնարկութիւններ: Միւս կողմից ապստամբված երկիրներում իրաւացի ցանկութիւններ են յայտնվում, որոնց կատարելը կառավարութեան նպատակն է: Այդ պատճառով ես յոյս ունեմ, որ մի քանի ժամանակից յետոյ այդ երկիրների մէջ կարելի կը լինի բարեկարգված հիմնարկութիւններ հաստատել և նախապատրաստել այն վայրկեանը, երբ նրանց կարելի լինի միացնել կայսերութեան հետ: Պատգամաւորների ժողովը անկասկած կը պաշտպանի կառավարութեան այդպիսի ձգտումները:“ Կառավարութեան առաջարկութիւնը յանձնվեցաւ բիւդժետային մասնաժողովին, որ յանձնեց պատգամաւոր Բուս-

---

Այսպէս Սալմանասար II-ի մահուց յետ՝ ամբողջ 49 տարիների ընթացքում ասորեստանցիք հանգիստ են թողնում Ուրարտու աշխարհը և չեն մտնում նրա սահմանները: Երևի, այս ժամանակաշրջանի վերջումը Ուրարտու թագաւորների զօրութիւնը նուազում է, որովհետև Սալմանասար III (786—770) վեց արշաւանք է ունենում այնտեղ: Այդ արշաւանքները յայտնի են ժամանակագրական ցուցակներից: Բայց թէ ինչ թագաւորներ են եղել այն ժամանակ Ուրարտում, մեզ ոչինչ յայտնի չէ, վասն զի Սալմանասար III-ի արձանագրութիւնները չեն հասել մեզ...

Տակլադ-Փալասար II-ի (744—726) մի արձանագրից մենք իմանում ենք որ Ուրարտացւոց թագաւորը՝ Սարդուրի՝ դաշնակցութիւն է կազմում Տակլադի դէմ հետևեալ դրացի իշխաններից. Մատիէ՝ Ագուջայի որդի, Սուլամալ Միլիդացի, Տարխուլար Գամգումացի և Կուստասպի Կոմուխեցի: Տակլադը աճապարում է պատժել դաշնակիցներին: Ճակատամարտը լինում է Կոմուխում՝ Կաստանա և Խալպու մօտ և, անշուշտ, դաշնակիցները ջարդվում են, Սարդուրի խոյս է տալի դէպի լեռները: Թագաւորը հալածում է նրան, 72,970 հոգի գերի է առնում և գրաւում նրա մայրաքաղաքը, Տուրուսպա, որտեղ կառուցանում է իր պատկերը: Սրանից յետոյ քարուքանդ է անում Ուրարտու հողերի մինչև 70 կասպու (450 անգղիական միլ) և փախցնում Սարդուրուն մինչև Եփրատ գետը, նրա թագաւորութեան սահմանագլուխը: Ըստ այսմ յափշտակում է նա Սարդուրու ամեն ինչ արքայական զարդարանքը, նրա կառքերը, ձիերը, ջորիները և այլն: Ուլուբա գաւառում Տակլադ հիմնում է Աստ-Բաղա քաղաքը և գաղթեցնում Հայաստանի լեռները ուրիշ նուաճեալ գաւառների բնակիչներին... Այս ամենը պատահել է 742 թվին, Եւ եթէ այս արձանագրի պատմածը ճշմարիտ իրողութիւն է, այն ժամանակ իրաւացի է անուանած ժամանակագրութեան ցուցակում այս արշաւանքը—«Ուրարտացւոց զօրքերի կոտորումն»: Չիարդ և իցէ, այս արշաւանքը վճռողական հետևանք չէ ունեցել, որովհետև 734 թուականին Տակլադ կրկին արշաւում է Ուրարտում, բայց շատ ցաւալի է, որ այս արշաւանքի մանրամասնութիւններից մեզ ոչինչ յայտնի չէ:

Այստեղ առ ժամանակ կտրում ենք մեր խօսքը և դառնում հետևեալ հարցին. ինչ ազգ էին Ուրարտու բնակիչները: Այս հարցի նկատմամբ այլ գիտնականների հայեացքների հետ մեր ընթերցողները ծանօթ են (տ. անցեալ տարվայ «Մշակ» հմ. 189): Իսկ այստեղ կը ծանօթացնենք ընթերցողին Ֆ. Պ. Պատկանեանցի խորհրդածութեանց հետ այս խնդրի վերաբերութեամբ:—Այս գիտնականները (Լենորման, Բաուլիսան և այլք), ասում է նա,—պնդում են թէ՝ հայերը, որք յայտնվում են պատմութիւնում Քրիստոսից առաջ VI դարում, ասորեստանցիների աշխարհակալութեան ժամանակ չը կային Հայաստանում: Ուրիշ խօսքով՝ Ուրարտուցիները և հայերը մի և նոյն ազգը չէին, և այս երկու ազգերը բնակվում էին Հայաստանում զանազան ժամանակներում: Ենթադրենք, որ այդ մի իրողութիւն է՞ իրաւ, այն ժամանակ մենք իրաւունք կունենանք հարցնելու. հայերը երբ եկան և փոխանակեցին Հայաստանում Ուրարտուցիներին: Մենք գիտենք VII դարի կէսում, Ասուրբանիպալի ժամանակ, ուրարտուցիները ահեղ այժ էին կազմում և որոնց ասորեստանցիները դեռ չէին նուաճել: Սրանից յետ Ասորեստանը շուտով ընկնում է Մեդաց և Մանանու (Ուրարտուցիներ) հարուածներից... Նոյն իսկ Նէնուէի ընկնելու ժամանակ հանդէս է գալի Ասիայում մի ազգ նոյնքան կործանիչ Ասորեստանի, ինչքան նաև Մարաց երկրի համար. մեր խօսքը Կիակսարի թագաւորութեան ժամանակ Սկիւթացւոց կամ Սագաց արշաւանքների վրա է: Սրանք կարճ ժամանակ միայն մնացին առաջաւոր Ասիայում, թողնելով իրանց յետևից աւերմանց և հրդեհների շաւիղը: Ահա այն ցոպէն, երբ Հայաստանի հողի վրա երևան կարող էին գալ հայերը, եթէ նրանք Հայաստանի բնիկ—կամ գոնեա—հին բնակիչներ չէին: Այն ժամանակ հարկաւոր է ենթադրել թէ՝ հայերը Սկիւթացւոց մի մասն էին կազմում և թէ այդ մասը մնաց նուաճեալ երկրում, կամ թէ հայերը մի առանձին ցեղ էին, որք ուղեկցում էին սկիւթացիներին նրանց արշաւանքներում և որոնք մնում են Հայաստանում և էլ չեն հեռանում նրանց: Այս երկու իսկ ենթադրութիւնն էլ հակասութիւններ են այն ժամանակվայ պատմութեանը: Բայց եթէ այս բոլորն չէ հայոց գալստեան ժամանակը, իսկ որտեղից և երբ եկան նրանք, երբ կարողացան նրանք նուաճել այդ լայնատարած երկիրը, երբ կարողացան անհետացնել այն ուժեղ և քաջամարտիկ ազգը—ուրարտուցիներին—որք դարերի ընթացքում այնքան ընդդիմութիւն են ցոյց տուել այնպիսի աշխարհակալներին, ինչպէս ասորեստանցիներն էին: Մտաբերենք ևս այն, որ Հայաստանի սահմանում, նոյն իսկ այդ ժամանակ, Մարաց թագաւորութեան կազմակերպութեան շրջանն էր: Միթէ կարելի է մտածել, որ հէնց այդ ժամանակ մի ուրիշ աշխարհակալ ազգ առնում է Հայաստանը առանց մի որ և է ընդհարումի Մարաց երկրի հետ, և ընդհակառակն՝ օգնում է նրան նրա ունեցած՝ բախման մէջ Ասորեստանի հետ, որի հիւսիսային գաւառները յարակցում է իր երկրին և ինքը առանց մի որ և է ընդդիմութեան ստորադրվում նրան: Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններում, որոնք ուշի ուշով միշտ նկատում են այն ամեն անցքը, ինչ որ կատարվում էր հիւսիսում,—մենք չենք գտնում մի որ և է ակնարկութիւն անգամ այս տեսակ հանդամանքի վրա... Շատ բնական է, որ ոչ Հերոդոտոս և ոչ մի այլ պատմագրան չեն իմացել ոչինչ այս խոշոր յեղափոխութեան վրա առաջաւոր Ասիայում... Եւ շատ պարզ է սրա պատճառը,—վասն զի երբէք այդ տեսակ յեղափոխութիւն չէ եղած այստեղ... Կան հիմունքներ, ըստ որում պիտի ընդունել Ուրարտուցիների և հայերի նոյնութիւնը: Այս հիմունքներից աւելի ծանրակշիռը մենք գտնում ենք դարձեալ Ասորեստանեայց արձանագրութիւններում, որք վերաբերում են միայն աւելի անագանեղ ժամանակաշրջանին: Ցայսմանէ, որ ասքամենիդների արձանագրութիւնները ըստ մեծի մասին գրված են երեք լեզուներով հին-պարսից, Սկիւթացւոց կամ Մեդաց և Ասորեստանեայց: Դարեհ Հիստասպի արձանագրութիւններում երկու առաջին լեզուներով հայոց անունը դրած է այնպէս, ինչպէս և այժմը էլ պատահում է՝ Armina, Arminiya, Harminiyara, մինչդեռ երկրորդում, այսինքն ասորիների թարգմանութիւնում՝ դրած է Ուրասատու, հինաւուրց Ուրարտուի թեթև ձևափոխութեամբ: Սրանից երևում է, որ ասքամենիդների ժամանակվայ ասորեստանցիները շարունակում էին անուանել Հայաստանի բնակիչներին այնպէս, ինչպէս իրանց նախնիքը, և թէ այն ազգը, որ կոչվում էր Արմին Միդաց ժամանակներում, ասորեստանցիների համար նոյն ուրարտուցիներն էին, ինչ որ էին նրանց համար աւելի հնագոյն ժամանակներում:

—Զը նայելով այն ամեն բացատրութեանց, ասում է պրոֆէսոր Պատկանեանը,—ես այս յօդուածումս Հայաստանի հինաւուրց բնակիչներին—ուրարտուցիներ—անուն եմ տալի և ոչ հայ անուն... Եւ այդ այն պատճառաւ չէ, որ ես կասկածանք ունենայի նրանց նոյնութեան վրա—ոչ, այլ այն պատճառով, որ չը կայ մի որ և է դրական տեղեկութիւն թէ հայոց պատմական անունը ժամանակակից լիներ Ասորեստանեայց Ուրարտուին: Հայ (Արմին) անունը, որպէս համազգային անուն, նշանակված ամբողջ հայոց ցեղերի կոչման համար, կարող էր ծագել աւելի ուշ ժամանակներում:

Սարգոն (721—704) աւելի բուռն յարձակումներ է անում Հայաստանի վրա քան իր նախորդները: Սա վճռաբար մտքին դնում է միանգամայն ստրկացնել Հայաստանը և այս նպատակով ձեռնամուխ է լինում հայոց գաղթականութեանը օտար երկիրներ, բնակեցնելով նրանց քանդ ու աւերակ դարձրած տեղերում հեռի գաւառների օտար բնակիչներին: Ուրարտուցիները իրանց կողմանէ չէին յուսահատվում և քաջութեամբ առնում էին ստացած հարուածները, նոր ի նորոյ յոտին կանգնելով... Այս երկար պատերազմները վճռողական հետևանք չէն ունեցել... Եւ ինքը, Սարգոն, կարծես խոստովանում է այս մասին, խօսելով իր արձանագրերում ոչ թէ Ուրարտուցիների նուաճման վրա, այլ նրանց հետ ուղեկցում սկիթացիներին նրանց արշաւանքներում և որոնք մնում են Հայաստանում և էլ չեն հեռանում նրանց: Այս երկու իսկ ենթադրութիւնն էլ հակասութիւններ են այն ժամանակվայ պատմութեանը: Բայց եթէ այս բոլորն չէ հայոց գալստեան ժամանակը, իսկ որտեղից և երբ եկան նրանք, երբ կարողացան նրանք նուաճել այդ լայնատարած երկիրը, երբ կարողացան անհետացնել այն ուժեղ և քաջամարտիկ ազգը—ուրարտուցիներին—որք դարերի ընթացքում այնքան ընդդիմութիւն են ցոյց տուել այնպիսի աշխարհակալներին, ինչպէս ասորեստանցիներն էին: Մտաբերենք ևս այն, որ Հայաստանի սահմանում, նոյն իսկ այդ ժամանակ, Մարաց թագաւորութեան կազմակերպութեան շրջանն էր: Միթէ կարելի է մտածել, որ հէնց այդ ժամանակ մի ուրիշ աշխարհակալ ազգ առնում է Հայաստանը առանց մի որ և է ընդհարումի Մարաց երկրի հետ, և ընդհակառակն՝ օգնում է նրան նրա ունեցած՝ բախման մէջ Ասորեստանի հետ, որի հիւսիսային գաւառները յարակցում է իր երկրին և ինքը առանց մի որ և է ընդդիմութեան ստորադրվում նրան: Ասորեստանի թագաւորների արձանագրութիւններում, որոնք ուշի ուշով միշտ նկատում են այն ամեն անցքը, ինչ որ կատարվում էր հիւսիսում,—մենք չենք գտնում մի որ և է ակնարկութիւն անգամ այս տեսակ հանդամանքի վրա... Շատ բնական է, որ ոչ Հերոդոտոս և ոչ մի այլ պատմագրան չեն իմացել ոչինչ այս խոշոր յեղափոխութեան վրա առաջաւոր Ասիայում... Եւ շատ պարզ է սրա պատճառը,—վասն զի երբէք այդ տեսակ յեղափոխութիւն չէ եղած այստեղ... Կան հիմունքներ, ըստ որում պիտի ընդունել Ուրարտուցիների և հայերի նոյնութիւնը: Այս հիմունքներից աւելի ծանրակշիռը մենք գտնում ենք դարձեալ Ասորեստանեայց արձանագրութիւններում, որք վերաբերում են միայն աւելի անագանեղ ժամանակաշրջանին: Յայսմանէ, որ ասքամենիդների արձանագրութիւնները ըստ մեծի մասին գրված են երեք լեզուներով հին-պարսից, Սկիւթացւոց կամ Մեդաց և Ասորեստանեայց: Դարեհ Հիստասպի արձանագրութիւններում երկու առաջին լեզուներով հայոց անունը դրած է այնպէս, ինչպէս և այժմը էլ պատահում է՝ Armina, Arminiya, Harminiyara, մինչդեռ երկրորդում, այսինքն ասորիների թարգմանութիւնում՝ դրած է Ուրասատու, հինաւուրց Ուրարտուի թեթև ձևափոխութեամբ: Սրանից երևում է, որ ասքամենիդների ժամանակվայ ասորեստանցիները շարունակում էին անուանել Հայաստանի բնակիչներին այնպէս, ինչպէս իրանց նախնիքը, և թէ այն ազգը, որ կոչվում էր Արմին Միդաց ժամանակներում, ասորեստանցիների համար նոյն ուրարտուցիներն էին, ինչ որ էին նրանց համար աւելի հնագոյն ժամանակներում:

—Զը նայելով այն ամեն բացատրութեանց, ասում է պրոֆէսոր Պատկանեանը,—ես այս յօդուածումս Հայաստանի հինաւուրց բնակիչներին—ուրարտուցիներ—անուն եմ տալի և ոչ հայ անուն... Եւ այդ այն պատճառաւ չէ, որ ես կասկածանք ունենայի նրանց նոյնութեան վրա—ոչ, այլ այն պատճառով, որ չը կայ մի որ և է դրական տեղեկութիւն թէ հայոց պատմական անունը ժամանակակից լիներ Ասորեստանեայց Ուրարտուին: Հայ (Արմին) անունը, որպէս համազգային անուն, նշանակված ամբողջ հայոց ցեղերի կոչման համար, կարող էր ծագել աւելի ուշ ժամանակներում:

Սարգոն (721—704) աւելի բուռն յարձակումներ է անում Հայաստանի վրա քան իր նախորդները: Սա վճռաբար մտքին դնում է միանգամայն ստրկացնել Հայաստանը և այս նպատակով ձեռնամուխ է լինում հայոց գաղթականութեանը օտար երկիրներ, բնակեցնելով նրանց քանդ ու աւերակ դարձրած տեղերում հեռի գաւառների օտար բնակիչներին: Ուրարտուցիները իրանց կողմանէ չէին յուսահատվում և քաջութեամբ առնում էին ստացած հարուածները, նոր ի նորոյ յոտին կանգնելով... Այս երկար պատերազմները վճռողական հետևանք չէն ունեցել... Եւ ինքը, Սարգոն, կարծես խոստովանում է այս մասին, խօսելով իր արձանագրերում ոչ թէ Ուրարտուցիների նուաճման վրա, այլ նրանց հետ ու-

սին այդ առարկայի մասին զեկուցումը որքան կարելի է շուտ ներկայացնել:

ՍԵՐԲԻԱ

Բելգրադից „Polit. Corresp.“ լրագրին հաղորդում են ապրիլի 10-ից: Կօրօնավայ քաղաքը իր ուղարկած պատգամաւորութեան միջնորդութեամբ դիմեց Միլան թագաւորին, խնդրելով թագադրութեան հանդէսը կատարել Սիչի վանքի մէջ, որ Բելգրադից շատ հեռու չէ: Հօմանիչների ցեղից եօթը թագաւորներ այդ վանքի մէջ են թագադրված: Իւրաքանչիւր թագաւորի համար մի նոր դուռն է շինվել որից նա թագադրութենից յետոյ դուրս է եկել վանքից: Այդ պատճառով ամբոխը Սիչի վանքը „եօթը դռնանի“ է անուանում: Այժմ Կօրօնավայի բնակիչները կամենում են վանքի մէջ ութերորդ դուռը բանալ, որ այնտեղից դուրս գայ Սերբիայի ութերորդ թագաւորը, որ առաջինն է Օբրենօվիչների ցեղից: Մի և նոյն ժամանակ Կօրօնավայի քաղաքային վարչութիւնը վճռեց բոլոր պատրաստութիւններն անել թագադրութիւնը հանդիսով տօնելու համար: Ցայտնի չէ, թէ թագաւոր Միլան ինչ պատասխան տուեց իր հաւատարիմ հպատակների այդ խնդիրքին, բայց անկասկածելի է, որ յիշեալ վանքը կը նախադասվի միւսներից: Թագադրութեան ժամանակը թէպէտ որոշված չէ, բայց նա օգոստոսից շուտ չի կատարվի:

Սերբիական «ուսումնականների ընկերութեան» նախագահը օրերում պատիւ ունեցաւ ներկայանալ թագուհուն և թագաւորին ընկերութեան կողմից շնորհաւորելու համար Սերբիան թագաւորութիւն յայտնելը: Տեսակցութեան ժամանակ ընկերութեան նախագահ Պանցիչ խնդրեց թագաւորից առանձին ուշադրութիւն դարձնել գիտութեան շահերի վրա: „Ձեր մեծութեան երևելի նախորդները, ասեց նա, միշտ առանձնապէս հոգացել են ժողովրդական լուսաւորութեան համար: Իշխան Միլոշ Օբրենօվիչ I, ձեր երևելի պապը, հիմնեց մի լիցէյ, որ Սերբիայի մէջ առաջին բարձր ուսումնարանն էր: Ձեր անմահ հօրեղբայր Միխայիլ Օբրենօվիչ III ստեղծեց գրականական ընկերութիւնը, որից յետոյ գիտական ընկերութիւն կազմվեցաւ: Մենք հաւատացած ենք, որ ձեզ կաջողվի պսակել ձեր նախորդների փառաւոր գործը, ապահովելով Սերբիայի անկախութեան գործը լուսաւորութեան կողմից: Մենք հաւատացած ենք, որ ձեր մեծութիւնը Սերբիայի մէջ համալսարան և ակադեմիա կը հիմնէ:“ Թագաւորը պատասխանեց, որ նրան շատ հաճելի են մտաւոր աշխարհի մշակների այդ ցանկութիւնը: Սերբիայի անկախութեան ձեռք բերելուն շատ նպաստեց օտար երկիրներում արմատացած համոզմունքը, որ գիտութեան ասպարէզի վրա Սերբիան կարող է միւս առաջադէմ ժողովուրդների հետ հաւասար ընթանալ: Յիշելով այն դժուարութիւնները, որոնց հանդիպում է համալսարանի հիմնելը, թագաւորը ասեց. „Մենք վնաս ենք կրում այն հանգամանքից, որ անցքերը ստիպում են մեզ չափազանց արագութեամբ առաջ ընթանալ, մինչդեռ դրա համար մենք բաւական միջոցներ չունենք:“ Վերջը Միլան թագաւորը խոստացաւ, որ բոլոր միջոցներ գործ կը դնի ժողովրդական լուսաւորութեանը նպաստելու և գիտութիւնը տարածելու համար:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամերիկական լրագիրները հաղորդում են, որ Ամերիկայի պատգամաւորների ժողովում, 201 ձայնի մեծամասնութեամբ ընդունվեցաւ մէկ օրէնք, որով չինացիների գաղթականութիւնը Միացեալ-Նահանգների սահմաններում արգելվում է տասն տարով:

—«Բէյտերի ընկերութեանը» Թէհրանից հաղորդում են ապրիլի 6-ից. Այսօր Էիւբ-խան հասաւ այստեղ:

—«Köln. Zeitung.» լրագրին ապրիլի 17-ից Կ. Պօլսից հեռագրում են հետևեալը: Ռուսաց դեսպանութիւնը երէկ յայտնեց Բ. Դրանը, որ պ. պ. Ցէրներ և Նօվիկով երկու շաբաթից յետոյ կը հեռանան Կ. Պօլսից, որովհետև ռուսաց լիազօրները այլ ևս յոյս չունեն այն բանի վրա, որ պատերազմական ծախսի խնդիրը մի կերպ վճռվի: Բ. Դուռը ծանր կերպով չէ վերաբերվում ռուսաց լիազօրների այդ սպառնալիքին:

—Վիէննայի «Polit. Corresp.» լրագրին Բելգրադից հեռագրում են ապրիլի 15-ից, որ Միլան թագաւորը, մինիստր-նախագահ Պիրոչանիցի ուղեկցութեամբ, երկու օրով Շաբաց գնաց: Թագաւորը կրկին կը վերադառնայ Բելգրադ, և այնտեղից արդէն մինիստր-նախագահի և ներքին գործերի մինիստր Գարաշանինի հետ միասին կը ճանապարհորդի Նահանգներում:

—Սերբիական «Պաշտօնական Լրագրում» ապրիլի 14-ից տպված է սերբիական թագաւորի շնորհակալական հեռագիրը Վիկտորիա թագուհուն անգլիական կառավարութեան կողմից Սերբիան թագաւորութիւն ճանաչելու պատճառով: Նոյն լրագրի մէջ տպված է անգլիական թագուհու պատասխանը, որ շատ բարեկամական է:

—Լրագիրներին Ցէտինէից հեռագրում են ապրիլի 6-ից, որ աւստրիական զօրքերի երեք գունդեր յարձակվեցան կրիվօշանների վրա և ստիպված էին յետ քաշվել: Կռիւը շարունակվում է: Աւստրիացիների կորուստը մեծ է:

—Լրագիրներին ապրիլի 6-ից հեռագրում են, որ ռուսաց դեսպան Նօվիկով երէկ ճաշեց պալատում և հրաժարական տեսակցութիւն ունէր: Ռուսաց դեսպանութեան գործերը Նօվիկովի բացակայութեան ժամանակ կը կառավարի դեսպանութեան խորհրդատու Օնու: Նրան է յանձնված պատերազմական ծախսի մասին բանակցութիւնների շարունակելը:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Սարա Բերնարի պսակվելու մասին «Figaro» լրագիրը հաղորդում է հետևեալը: Ապրիլի 4-ին, առաւօտեան 8 ժամին, Սարա Բերնար պսակվեց Լօնդօնում, յունական հիւպատոսարանի եկեղեցում, դերասան Դարիայի հետ: Այդ լուրը սկզբից անհաւատալի երևաց, որովհետև Սարա Բէրնար դեռ մարտի 31-ին գտնվում էր Նէապօլում, ուր մի և նոյն օրը խաղաց «Կամէլիազարդ Տիկին» պիէսայում: Բայց վերջը բոլորովին հաստատվեցաւ այդ լուրը: Ապրիլի 1-ին Սարա Բէրնար յայտնելով, որ ինքն գնում է Նիցա, ուր նրան սպասում էին, իսկապէս Փարիզ գնաց: Լիօնի երկաթուղու կայարանում նշանվածներին սպասում էր Մէյեր, որը հեռագրով կանչված էր Լօնդօնից: Առանձին գնացքով երեք ուղեկիցները անյայտաղ Լօնդօն ուղևորվեցին: Գնացքը հասաւ մօտ չորս ժամին կէսօրից յետոյ, իսկ պսակը նշանակված էր 5 ժամին: Ստիպվեցան սպասել մինչև հետևեալ օրվայ առաւօտը, երբ և կատարվեցաւ պսակի խորհուրդը: Սարա Բէրնար ներկայումս ունի մէկ միլիոն երկու հարիւր հազարի կարողութիւն: Ինչ վերաբերում է Դարիային (նրա իսկական անունը Ժակ դ'Ամալա է) նա 35 տարեկան է և լաւ կարողութիւն ունի: Դէպի թատրոնը ունեցած սէրը դրդեց նրան Սարա Բէրնարի խումբը մտնել, իսկ սէրը յետոյ յայտնվեցաւ: Սարան, որ այժմ անուանվում է տիկին դ'Ամալա, չէ փոխում իր սովորութիւնները: Պսակից մէկ ժամ յետոյ նա թողեց Լօնդօն և գնաց Նիցա, ուր հէնց դալու օրը խաղաց «Կամէլիազարդ Տիկին» պիէսան: Ահա թէ ինչ է նշանակում ժամանակ չը կորցնել: Նիցայում երկու ներկայացում տալուց յետոյ, ամուսինները ինչպէս հաղորդում են Փարիզի լրագիրները, կուղեւորվին Սպանիա, այնտեղից կերթան Ֆրանսիական գաւառները (Բօրդօ, Բայոննա, Նանտ, Ռուան և Լիլլ): Յետոյ Սարա Բէրնար ներկայացումներ կը տայ Բրիւսսէլում և Լօնդօնում:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 14 ապրիլի: „Правит. Вѣстн.“ լրագիրը հաղորդում է. զիւղա-

---

նեցած պատերազմների վրա միայն: «....Ես ստորագրեցի Ասորեստանին Իլիպի դաւառը, ես պատերազմեր եմ ունեցել Ուրարտուում, ես ամրակ դարձրի Մուսասիր, նուաճեցի Անդիան և այլն:» Սարգոնի տասն և հինգ արշաւանքներից հինգը ուղղված է եղել Ուրարտոյ դէմ, որի թագաւորը՝ Ուրզա անհաշտ ախոյեան է հանդիսանում նրան:

719 թիւն էր: Սունդախու և Դուրդուկկու քաղաքները ապստամբվում են՝ Ասորեստանին հաւատարիմ՝ Վանայ պայազատոր—Իրանզու դէմ, և Զիկիրտու իշխանի՝ Միտատի՝ օգնութեամբ մտադիր են լինում անջատվել Ասորեստանից: Նոյն իսկ այդ ժամանակ Սուկիայ, Բանա, Գապա, Արիտիկնա քաղաքները մտնում են Ուրարտու թագաւորի՝ Ուրզայի՝ իշխանութեան տակ: Սարգոն ստիպվում է պատժել սրանց այսպիսի դաւաճանութեան համար: Նա պատժում է ոչ միայն զլխաւոր խռովարարներին, այլ նաև քանդում է այդ քաղաքները և նրանց բնակիչներին գաղթեցնում ասորւոց և փիւնիկեցւոց երկիրները: Սրանցից յետոյ անցնում է երեք տարի: Սարգոն զբաղված է լինում իր թագաւորութեան հարաւային սահմաններում, երբ Ուրզա մի մեծ դաշնակցութիւն է կազմում նրա դէմ. սա քարշում է առընդհանուր գործը Միլիդան իշխանին՝ Բագատոն,—նաև Կարալլա Զիկիրտու և Վանայ իշխանութեանց պայազատորներին: Դաշնակիցները բռնում են՝ ասորեստանցիներին հաւատարիմ՝ Վանայ պայազատորին, Իրանզու որդուն, Ազուին և լեռներում սպանում, իսկ Վանայ իշխանութիւնը յանձնում են նրա եղբօրը, Ուլլուսունին: Այս համբաւը հասնում է Սարգոնի ականջին: Սա արագութեամբ դառնում է Վան, ջարդում է դաշնակիցներին, մորթեցնում է անում Բագատոն, իսկ Ուլլուսունի վերաբերմամբ ողորմած է գտնվում և նրա եղբօր աթոռը թողնում է նրան: Այնու ամենայնիւ Ուրզայի լարած դաշնակցութիւնը ոչ միայն չէ քանդվում, այլ նաև նոր այժ է ստանում, երբ մտնում է ի թիւս դաշնակիցների Ալարուր գաւառի իշխանը ևս: Շուտով Ուլլուսունն էլ անցնում է դարձեալ այս կողմը: Սարգոն, որ գտնվում էր այս ժամանակ Վանայ լճի շրջակայքում, աւերում է Ուլլուսունի իշխանութիւնը և կրակի ճարակ անում նրա մայրաքաղաքը՝ Իզիրտուն՝ և ուրիշ մի քանի ևս քաղաքներ: Բայց զարմանալին այն է, որ Սարգոն դարձեալ ողորմում է Ուլլուսունին և միայն աւելցնում է նրա վրա դրած հարկը: Իսկ Ալլարուրեան իշխանին նրա ընտանիքով և մասամբ բնակիչներին գաղթեցնում է Ասորիք:

Հաղիւ թէ վերջ է գտնում այստեղ ապստամբութիւնը, թագաւորը ճամպարում է Ատրպատական... Ուրզա իսկոյն օգուտ է քաղում Սարգոնի այս բացակայութիւնից. կրկին միաւորվում է Ուլլուսունի հետ, քարշում է իր կողմը Դայաուկկուն, որին Ասորեստանցիները նշանակել էին Վանայ կառավարիչ: (Ասորեստանցիները սովորութիւն ունէին նուաճեալ երկրում թողնել նրանց իշխանին, բայց մի և նոյն ժամանակ ղրկում էին նրա մօտ իրանց ներկայացուցչին, որպէս քաղաքական ղեկավար): Սարգոն դարձեալ ճամպարում է դէպի հիւսիս, առնում է այստեղ 32 ամրոցներ, որոնք տուած էին Ուլլուսունից Ուրզին, Դայաուկկուն գերի տանում: Բայց Ուրզա չէ դադարում. նա կրկին նոր դարան է լարում Սարգոնի դէմ: Սարգոն այս պատճառով արշաւում է Զիկիրտու գաւառում (Ատրպատականում) Ուրզայի նոր դաշնակից՝ իշխան Միտատի վրա, կրակ է տալի Գարդուն, իշխանութեան մայրաքաղաքը, առնում է ուրիշ երեք քաղաք ևս ու 24 դղեակներ: Միտատին խոյս է տալի և անհամբաւ անհետանում: Այնուհետև Սարգոն պատահում է Ուրզայի հետ, ջարդում է սրա զօրքը և սրա ընտանիքից 250 գերի առնում: Ուրզա փախչում է դէպի լեռները և այնտեղ մօտ ութ ամիս թափառաշրջում: Նրա երկիրներից մի մասը, որ Վանայ իշխանութեան կից էր, Սարգոն տալիս է Ուլլուսունին, որը անպատում հնարքներով միշտ ողորմութիւն է գտնում Սարգոնի հոգում: Իսկ Ուրմիայի շրջակայքում գտնուած Ուրզայի երկրները քանդում ու աւերում է: Այս ամենը կատարելուց յետոյ նա գալիս է և մտնում Մուսասիր գաւառը (Վանայ լճի հիւսիսային ծովեզրում), որի իշխանը այն ժամանակ Ուրզանան էր, մեզ յայտնի Ուրզայի, Ուրարտոյ թագաւորի, ենթադրեալ կալուածատէրերից ամենահզօրեղը: Մուսասիր քաղաքումն էին գտնվում Ուրարտուցիների բարձրագոյն սրբութիւնները՝ Հալդի աստուածը (թէ՛ աստուածուհին): Ուրզանան խոյս է տալի դէպի լեռները, թողնելով իր մայրաքաղաքը թշնամու ինքնակալ հաճոյքին: Սագոն առնում է Մուսասիրը, գրաւում է Ուրզանայի գանձերը, նրա կանանցը ու երեխերքին, առնում է 8160 գերիներ, մեծ քանակութեամբ էշեր և այլ կենդանիներ: Բնակիչների վրա ոսկու, արծաթ և այլ մետաղների մեծ հարկ է դրվում: Նոյն իսկ այդ ժամանակ թագաւորը տանում է իր հետ Ասորեստան Ուրարտուցիների աստուածներին—Հալդի և Բահաղարաու (կամ Բահամազդու)....

Միշտ ծեր ու արիասիրտ Ուրզա, լսելով իրանց աստուածների գերի գնալը, այս անգամ յուսահատութեան մէջ իր սրով ինքն իրան հարկանում է ու սպանում: Սարգոն, իր պատերազմական յաջողութիւններին վերադրելով Ուրզայի մահը, ամեն մի պատեհ առիթ ունեցած հանգամանքներում զանազան արձանագրերում մատնում է այդ իրողութիւնը... Ուրզայի դաշնակիցները նրա մահից յետ չեն կորցնում իրանց քաջասրտութիւնը և յառաջ են տանում նրա ձեռնարկած գործը....

Այս պատերազմները, ինչպէս տեսանք, կատարվել են Ասորեստանի հիւսիսում և հիւսիսային արևելքում: Անխոնջ Ուրզան ոչ փոքր հոգս է պատճառել Սարգոնին նոյնպէս հիւսիսային արևմտեան դաւառներում՝ Խամանում—Միլիդու քաղաքով հանդերձ, Կարկամիշում, Մուսկում, Թաբալում, Խիլակխում և Գամգումում: Այս պատերազմների մանրամասնութիւնները ևս բաց եմ թողնում, նկատելով որ միշտ Ուրարտուցիներն են եղել շարժառիթ այս պատերազմների, որոնց մէջ պատահում ենք Ուրարտոյ մի թագաւորի անունի հետ՝ Արգիստեի հետ՝ և այս պատերազմը վերաբերում է 708 թիւն...

Այսպէս Ասորեստանցիների բացարձակ թշնամական ընդհարումները Ուրարտոյ հետ ոչ մի վճռողական հետևանք չէ ունենում և Սարգոնի յաջորդները, ինչպէս երևում է, թողնում են հիւսիսային Հայաստանի նուաճելու միտքը... Յայտնի Սենաքերիբը (704—680) բաւականանում է միայն հիւսիսային Հայաստանին կից գաւառներում կարգադրել տալ մշտական նկատողութիւն այն չարժողութեանց և եղելութեանց վրա, որ տեղի են ունեցել Ուրարտում: Իսկ նրա յաջորդ, Ասուր-աքի-իդինի՝ (680—669) Աստուածաշնչի Ասարհադոնի, արձանագրերում մենք ոչինչ չենք գտնում վերաբերեալ Հայաստանին: Ասուրբանիպալ (669—627) հէնց միայն մի յաղթանակակիր արշաւանքի վրա է խօսում Վանի վրա, որի իշխանը այն ժամանակ Ախսերան է եղել... Հետեւեալ արձանագիրը ակներև ցոյց է տալի թէ՝ Ուրարտուցիները իրանց քաջութիւններով Ասորեստանցիների աչքում վերջի վերջոյ ինչ պատուոյ և յարգանաց են արժանանում և թէ Ասուրբանիպալ ինչ ընդունելութիւն է անում Ուրարտոյ ներկայացուցիչներին... Ասուրբանիպալեան արքունիքի մի պատի վրա ի միջի այլ պատկերների նկարագրված է թագաւորը, որը՝ կառքի մէջ նստած՝ դեսպաններ է ընդունում: Այս պատկերը ունի հետևեալ գլխագիրը. «Ես Ասուրբանիպալն եմ Ասորեստանի թագաւորը: Ուրարտոյ թագաւորի, Ուրզայի, ազատները եկան ինձ մօտ բարեկամութիւն խնդրելու: Էլամների ազատներին՝ Նաբուդամիկին և Ումբադարին՝ շղթայակապ նրանց առաջին կանգնացրի: Նրանց ներկայութեամբ ես հրամայեցի լեզուները կտրել և մորթեղերծ անել Մանու—կի—ախին և Նէնիպ—ուզալլին:» Սրանից էլ մեծ պատիւ չէր կարող անել Ասուրբանիպալը իր հիւրերին...

Այս արձանագրով վերջանում է Ասորեստանի ամենայն ինչ յարաբերութիւնները հինաւուրց Հայաստանի հետ:

Գաս. Եղուրեան

ցիներին թույլ է տրված անշարժ կայքեր առնել մինչև 300 ր. արժողութեամբ, հաստատել առանց հարկերի, միայն վ. օլոստնոյ վարչութեան առանձին գրքի մէջ արձանագրելով։ Լրագիրները ապրիլի 14-ից հաղորդում են. զինուորական վարչութիւնը յայտնեց դումային, որ կանանց բժշկական կուրսերը կը փակվեն, եթէ քաղաքը նրանց իր հոգատարութեան տակ չի առնի։ Կօբօզեվի և Մոսկվայում կալանաւորված Բոգդանովիչի մի և նոյն անձ լինելը կատարելապէս յայտնված է։ Նա Մոսկվայում նոր յանցանք էր պատրաստում։ Գեներալ Սկոբելեվ առողջանում է։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՑԱՑՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՄՈՒՐԱԲԱ, շաքարի ձուաներ, պանիր-չեստեր, խաւիար և այլն։ Ծախվում են շատ էժան

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ ՄԷՋ

Նոյն տեղ ծախվում են. բազկաթոռ-մահճակալ 8 ր., ամբողջ **ՀԱԳՈՒՍՏ** 12 ր., չը թրջող վերարկուներ 6—18 ր. և մեծ քանակութեամբ **ՐԷՎՕԼՎԵՐՆԵՐ**, դանակներ և այլն։

1—10

ՄԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍԱՆՈՂ,

Որ մայիս ամսի կէսից մինչև ամառվայ վերջը բնակվելու է ՄԱՆԳԼԻՍՈՒՄ, յանձն է առնում ՊԱՐԱՊԵԼ թէ կրկնութեամբ և թէ դասերով զանազան ուսումնարանների աշակերտների և աշակերտուհիների հետ և թէ փոքր երեխաների հետ։

Մանրամասն ՊԱՑՄԱՆՆԵՐԸ, այսինքն՝ ո՞ւմ և ի՞նչ հասակի երեխայի հետ պէտք է պարապել, ի՞նչ առարկաներից, ո՞ր քան ժամ և այլն և այլն խնդրում են ցանկացողներին թողնել „Մշակի“ խմբագրատան մէջ, ուր կարող են գտնել և յիշեալ ուսանողի հասցէն։ 7—10

ՎԻԷՆՆԱՅԻ ԱԹՈՌՆԵՐ

36 ՐՈՒԲԼ

Եփ. Ծատուրեանցի դէպոյում

16—20

ԻՐԱՒԱԲԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ, Գոլովինսկի պրոսպեկտի վրա, տուն Ճարտարապետ Բէյլօի։ Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյեան 7—10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օրերից և մեծ տօներից։

ԵՒՐՕՊԱԿԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՊԱՀԵՍՏՈՒՄ

ВЪ СКЛАДѢ ЕВРОПЕЙСКИХЪ ТОВАРОВЪ

№ 144 ԾԱՎԱՐՈՎ Ի ԱՐԺԱՆ

Արծրունու գալլերեում՝ Մեծոցի Քարվանսարայի տակ մեն տեղ դնելով

Տէրեր Քարվանսարայի Մեծոցի

21—60

ՀԱՑԱՐԿՈՒՄՆԵՐԸ։

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНІЕ ТУРЕЦКИХЪ АРМЯНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ՄԻ ԳԵՐՄԱՆՈՒՀԻ ՏԻԿԻՆ

Ցանկանում է դասեր տալ ԳԵՐՄԱՆԵՐԷՆ, ԱՆԳԼԻԵՐԷՆ և ՖՐԱՆՍԵՐԷՆ լեզուներից և նոյնպէս ընդհանուր ուսումնարանական առարկաներից։

ՊԱՑՄԱՆՆԵՐԻ մասին դիմել „ՄՇԱԿԻ“ խմբագրութեանը։

4—10

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆՆԱՅԻ ՄԵԲԵԼ ամենայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկաթէ ԿՐԱՎԱԹՆԵՐ 8—30 ր., չամադաններ 250—25 ր., սակվոյաժներ 1. 30—12 ր., սուն դուկներ ճանապարհի 6—35 ր., մարաններ (погребцы) 6—25 ր., սամովարներ 60 կ.—1.25 ֆունտը., կուխոնի պղնձէ ամաններ, գերմանիայի երկաթէ էմալով ամաններ. ումիվալնիկներ մրամօրնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լուլանի 6—32 ր., ռէվոլվէրներ ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրոններ. (գուլաններ) ռէվոլվերի, սիգար Ռինգարդի ֆաբրիկից. պապիրոս և թամբաքու կուշնարովի գիլզի պապիրոզի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԷՑ (չայ) ԵՂ. ՊԱՊՈՎՆԵՐԻ, բիսկվիտ. (սուխար չայու և կաֆէի) էլինէմի. կօֆէ էլինէմի և Միխէլսօնի. Պետերբուրգու 40—1 ր. 25 կ. հայելիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրոբկայ գինէվաճառների, հանքային և գարեջրի (для зельтерскихъ водъ и пива) ղուլթուկ (пухъ), պաղնոսներ սամովարի և չայու, դանակ չանդալ զանազան ֆաբրիկաների 1 ր. 20 կ.—25 ր. դուժինը. գրչակոթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջիբի 1—60 կ.—12 ր., դանակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուխոնի 1—40 մինչև 3—20 կ. պրիբօրմիս կտրելու մաշինայ. Անգլիական ութոներ, Բրիտանա՛ի չայնիկներ, կաֆէինիկներ ամենայն տեսակ, Ջաղացներ կաֆէի համար, Ֆիլտեր—Ջուր մաքրելու, կրախմալ կարօբկէն 18 կ., վաքս Ֆրանսիայի ժակոյ, թուղթ փոշտի, կանվերտներ, սուրգուչ, մատիտ, գրիչ երկաթէ, գրչակոթ, քարետախտակ, թանաք, թանաքամաններ, պրեսպապիեներ, գդալներ սեղանի և չայու ֆրաժէ, վարշավի և բրիտանսկի դուժինը 1—50 կ. մինչև. 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չուսիչկէք 45 կ.—5 ր., շամադաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. Ջուխտ, պղսապոշկաններ վարշավու, ՌԵԶԻՆԻ ԿԱԼՕՇՆԵՐ, ամեն տեսակ, գուլբաններ կանանց և մարդկերանց 15 կ.—50 կ. Ջուխտ, շապիկներ, մարդկերանց գալուստիկներ, զոնտիկներ 35 կ.—4—50 կ., հատ, անձրևի և շքի. սանդրեր շիրմայու ոսկորէ, գուտապերչովի և փայտէ, շչոտկաներ գլխի, շորի, սապոնի, պոլի և կարտի համար. չուլքի թէլ (бумага) մատոկի կօճի և շալէ (гарусъ) ֆելչատկէք մարդկերանց և կանանց, պորտմաններ, քիսաներ, պապիրոսի ամաններ և մանր գոյնտերեյնի ապրանքներ, սապոն ամեն տեսակ 3 կ.,—30 կ., կտոր, հոտավէտ ջրեր, պուդրա, Գլիցերին ջրի քացախ, հոտավէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱԲՕՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն։

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերոյիշեալ ապրանքներ մեծ քանակութեամբ միշտ պէս գտնվում են ՄԻՔԱՅԵԼ ՏԷՐ ՆԻԿՈՂՈՍԵԱՆՑԻ պահեստում. (въ складѣ) Միջի փողոցում կաթոլիկաց փողոցի անկիւնում № 13.

Օտարաքաղաքացիք կարող են դիմել հետևեալ հասցէով. Тифлисъ Михаилу Н. Теръ-Никогосову.

31—180

Միջի փողոց, կաթոլիկեսկայա փողոցի անկիւն № 13.

ՄԵԾ ՎԱՃԱՌՈՒՄՆ ՄԻՆՉԵՒ ԱՄՍՎԱՅ ՎԵՐՋԸ

ՄԱՏԻՏՆԵՐ 8 կ. դիւժինը, ԾՐԱՐՆԵՐ 3 կ. հարիւրը, սապօն 3 կ. հատը, արևի ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐ 50 կ., ՇՂԹԱՆԵՐ (նոր ոսկուց) ժամացոյցի համար 50 կ., կրաններ 10 կ., ջրի ամաններ 30 կ., կժեր 25 կ., կախարաններ 4 կ., ՖԻԼՏՐԱՆԵՐ 3 ր., ԾԸԾԻՂՆԵՐ 1 ր., հայելիներ 35 կ., վարտիքներ 4 ր., պիջակներ 6 ր., ԱՄԲՈՂՋ ՀԱԳՈՒՍՏ 13 ր., դլխարկներ 1 ր., չը թրջվող վերարկուներ 6 ր., շչէօտկա 90 կ., ԱՍԵՂՆԵՐ 100 հատը 8 կ., կանանց և տղամարդկանց ԳՈՒԼԲԱՆԵՐ 2 ր. 50 կ. դիւժինը, ՄԵՂՐԱՄՈՄ 32 կ. անգլիական ֆունտը, կանֆետներ 40 կ. ֆունտը, ԴՐԱՊ, տրիկօ, ԱԼԲՕՄՆԵՐ, բրիտանական մետալի առարկաներ և այլն ԿԻՍԱԳՆՈՎ, մոմեր, մուրաբա և այլն շատ էժան։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԽԱՆՈՒԹՈՒՄ

ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՑ։

16—50

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ՐԱՖՖԻ

ԴԱՒԻԹ ԲԷԿԻ

III ԳԻՐՔԸ

Բաղկացած է 563 երեսներից

ԳԻՆՆ Է 2 ՐՈՒԲԼ

Վէպի այս հատորի մենավաճառութիւնը պատկանում է բացառապէս Թիֆլիսի «ԿԵՆՏՐՕՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑԻՆ»։ Օտարաքաղաքացիք կարող են դիմել այս հասցէով.

„ЦЕНТРАЛЬНАЯ КНИЖНАЯ ТОРГОВЛЯ“ (на Головинскомъ проспектѣ въ д. Мириманова, №№ 3 и 4).

ВЪ ТИФЛИСѢ

1—10

Պատիւ ունեմ յայտնել որ իմ նոր բացած ՖԱԲՐԻԿԱՑՈՒՄ լաւ ԾԽԱԽՈՏԻ սիրողները և գործածողները կը գտնեն

ԸՆՏԻՐ ԾԽԱԽՈՏ ԵՒ ՊԱՊԻՐՈՍՆԵՐ

Մաքուր թիւրքաց, ամենալաւ տեսակների ծխախոտից, առանց որ և է խառնուրդի։ Ես երաշխաւոր եմ որ իմ պատրաստած ծխախոտը կարող է բաւականացնել ամենընտիր ճաշակին, ծխախոտի գինը, ֆունտը 3 ռուբլուց մինչև 10 ռուբլի, իսկ պապիրոսների 100 հատը սկսած 1 ռուբլուց, մինչև 3 ռուբլի։

Գործարանս գտնվում է 3-որդ բաժնում Հեռագրական կայարանի մօտ, իսկ մագազինս Արծրունու գալլերեում, Դվորցովի փողոցի վրա, № 3.

Պարտք եմ համարում այն էլ աւելացնել որ իմ ֆաբրիկայի արդիւնաբերութիւնները կը ծախվեն միմիայն իմ մագազինում։

Գործարանատէր ՇԱՀԻՆԵԱՆՑ

21—25

ԱՐԴԷՆ ԼՈՅՍ ՏԵՍԱՒ

Ռուսաց յայտնի գրող **ՎՈՒԶԵՏԻԶԻ** „ДВѢ ЕЛКИ“ մանկական գրքուկի հայերէն թարգմանութիւնը **„ԵՐԿՈՒ ՏՕՆԱԾԱՌ“** անունով։

Այս գրքոյկը ընդունել էր տպագրելու հայերէն գրքերի հրատարակութեան ընկերութիւնը. բայց իրանից անկախ պատճառներով ինքն ընկերութիւնը յաջողութիւն չունեցաւ տպագրելու։ Տպագրված է շատ ընտիր թղթի վերայ խոշոր տառերով։

ԳԻՆՆ Է 20 ԿՈՊԵԿ։

Կարելի է ստանալ թէ՛ կենտրոնական գրավաճառանոցից և թէ՛ թարգմանողից՝ հետևեալ հասցէով.

Тифлисъ—на Авлабаръ Ивану Петровичу *Назаріанцъ.*

Дозволено цензурою, Тифлисъ, 15 Апрѣля 1882 года. Типогр. Главн. Упр. Главноначальств. гражд. час. на Кавк., Лор.-Мелик. ул., каз. д.

JOURNAL D'ORIENT

HEBDOMADAIRE

Paraissant a VIENNE (Autriche)

ABONNEMENTS: 1 an. . . 8 roubles

6 mois. . . 4 —

REDACTEUR EN CHEF F. Salles.

1. Weihburggasse 9. (Vienne)